«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Մաքրուհի Սաֆարյան Խորենի

Ուսումնական հաստատություն՝ Ե. Ասատրյանի անվան միջնակարգ դպրոց

Թալին 2023

Ներածություն

Դաստիարակությունը սոցիալական երևույթ է, հասարակության գործառույթ, որի նպատակը աճող սերնդին կուտակված պատմահասարակական փորձի փոխանցումն է: Դաստիարակությունը կարող է ներկայացվել որպես երեխայի /սերնդի/ արժեքային համակարգի ձևավորման գործընթաց, որին մասնակցում են հասարակության գրեթե բոլոր սոցիալական օղակները՝ ընտանիքը, կրթական համակարգը, էթնիկ միջավայրն իր մշակութային արժեքներով և զարգացման մակարդակով, արվեստի օջախները, ԶԼՄ-ները, եկեղեցին: Լայն մանկավարժական առումով դաստիարակությունը ներկայացնում է կառավարելի մանկավարժական գործընթաց՝ ուղղված երեխայի անձի ձևավորմանը:

Այս աշխատության նպատակներն են ներկայացնել թե ինչ է առհասարակ դաստիարակության գործընթացը, ինչ է իրենից ներկայացնում ծնողի ներգրավվածությունը դաստիարակության գործընթացին, ինչ նշանակություն ունի այն: Խնդիրն է ներկայացնել, թե ինչ մեթոդներով կարելի է խթանել ծնող-ուսուցիչ կապը:

Հարկ է նշել, որ երեխայի հետազոտման, նրա լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերում դպրոցի և ընտանիքի փոխներգործության շարժառիթն այդ կառույցների ընդհանուր հետաքրքրություններն են: Այդպիսի փոխհարաբերությունների հիմքում միմյանց նկատմամբ վստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության և օժանդակության, համբերատարության սկզբունքներն են: Դրանք օգնում են ուսուցիչներին և ծնողներին՝ համատեղ ջանքերով երեխայի ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ որակների ու հատկությունների ձևավորման պայմաններ ստեղծել: Երեխաներին, ծնողներին և ուսուցիչներին միավորում են ընդհանուր մտահոգություններն ու խնդիրները, որոնց լուծումներն էապես պայմանավորված են դրանց փոխներգործության և համագործակցության բնույթով: Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը նպատակասլաց և երկարատև աշխատանք է, որն ամենից առաջ ենթադրում է ընտանիքի, երեխայի ընտանեկան դաստիարակության պայմանների ու յուրահատկությունների բազմակողմանի և համակարգված ուսումնասիրություն: Այդ երկու ինստիտուտների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր

փուլերում պետք է կազմակերպվեն պլանավորված ու համակարգված ձևով: Ծնողները և ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են: Հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, համատեղ ուժերով մշակվեն դաստիարակչական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:

Արդի ժամանակաշրջանում աշխարհի շատ երկրներում դաստիարակության բովանդակությունը ներառում է անձի համակողմանի զարգացումը, աշխարհայացքի ձևավորումը, մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական, իրավական, տնտեսագիտական, էկոլոգիական զարգացման գործընթացները, աշակերտական կոլեկտիվների գործունեությունը, արտադասարանային, արտադպրոցական դաստիարակչական աշխատանքների համակարգը: Դաստիարակության բովանդակության համակարգի մեջ կարելի է ընդգրկել տվյալ ազգի, ժողովրդի ավանդույթների, սովորույթների, նաև կրոնաբարոյական դաստիարակությունը: Դաստիարակության բովանդակությունն ընդգրկում է նաև գիտելիքների, կարողությունների ու հմտությունների համակարգը, անձի որակական գծերը, վարքի կայուն սովորույթները և այլն:

Դաստիարակությունը, լինելով նպատակասլաց ներգործությունների ամբողջական համակարգ, համարվում է մանկավարժական գիտության շատ դժվարին բնագավառներից, որն ունի մի շարք առանձնահատկություններ: Առաջին առանձնահատկությունն այն է, որ նրանում հանդես են գալիս օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ: Օբյեկտիվ գործոններն այն պայմաններն են, որոնցում գործում և ապրում է անձը, իսկ սուբյեկտիվ գործոնը դաստիարակողի արվեստն է, նրա մանկավարժական վարպետությունը:

Դաստիարակության գործընթացի երկրորդ առանձնահատկությունը նրա արդյունքի միանգամից չերևացող կողմն է:

Դաստիարակության գործընթացի երրորդ առանձնահատկությունը նրա երկարատևությունն է: Պետք է մշտապես իմանալ, որ մարդու դաստիարակությունը մեկ օրվա, մեկ տարվա գործ չէ: Այն երկար ու ձիգ տարիների ներգործությունների, ազդեցությունների, դաստիարակի տքնաջան աշխատանքի և ինքնադաստիարակության արդյունք է:

Դաստիարակության գործընթացի չորրորդ առանձնահատկությունը նրա անընդհատությունն է: Դեպքից դեպք իրականացվող դաստիարակությունը լավ արդյունք չի կարող տալ: Դաստիարակության գործընթացը նպատակասլաց,

նպատակաուղղված, պլանավորված, ծրագրավորված, անընդհատ ծավալվող գործունեություն է։

Դաստիարակության գործընթացի հինգերորդ առանձնահատկությունը նրա համալիր, կոմպլեքսային բնույթն է։ Այդ ասելով պետք է հասկանալ դաստիարակության նպատակի, խնդիրների, բովանդակության, սկզբունքների, մեթոդների, հնարների ու միջոցների, դաստիարակության ձևերի զուգակցված կիրառումն է, ինչպես նաև դաստիարակությունը իրականացնողների՝ ընտանիք, դպրոց, հասարակություն և այլ ջանքերի զուգակցված միասնական ձևով գործադրումն է։

Դաստիարակության գործընթացի վեցերորդ առանձնահատկությունը նրա երկկողմանի բնույթն է։ Այսինքն՝ դաստիարակության գործընթացն ունի ներգործությունների երկու ուղղություն. ա) դաստիարակողից դեպի դաստիարակվողները և բ) դաստիարակվողներից՝ դեպի դաստիարակողը։ Սա յուրօրինակ համագործակցություն է, որի ընթացքում իրենց անձը ձևավորում ու զարգացնում են ոչ միայն դաստիարակվողները, այլ նաև դաստիարակողը։ Դաստիարակության գործընթացում մերթ դաստիարակողն է դառնում սուբյեկտ, մերթ դաստիարակվողը։

Դաստիարակության գործընթացի յոթերորդ առանձնահատկությունը նրա ամբողջական բնույթն է։ Այդ նշանակում է՝ դաստիարակվողներին դաստիարակել ոչ թե մեկ ուղղությամբ, այլ դաստիարակության ընդհանուր համակարգի բաղկացուցիչ մասերի բոլոր ուղղություններով։

Ծնողի ներգրվածության դերը դաստիարակության գործընթացում

Երեխայի առաջնային սոցիալականացումը, դերային և վարքագծային կարծրատիպերի, արժեքային համակարգերի և աշխարհայացքի ձևավորումը տեղի է ունենում ընտանեկան միջավայրում։ Առաջին հերթին ընտանիքն է հոգ տանում երեխայի անվտանգության և կարիքների մասին, կրթում ու դաստիարակում նրան, ապահովում հոգեբանական հանգստություն ու հարմարավետություն։ Սակայն երբ երեխան դառնում է դպրոցական, դաստիարակության և կրթության գործընթացը տեղափոխվում է կրթական հաստատություն։

Հատկանշական է, որ դպրոցական կյանքում ծագող խնդիրների նկատմամբ երեխայի վերաբերմունքի մեջ գերակշռող մաս են կազմում ընտանեկան միջավայրում ձեռք բերված սոցիալական դիրքորոշումները, որոնք նպաստում կամ խոչընդոտում են դժվարությունների լուծմանը, այդ իսկ պատճառով ընտանիքի դերը երեխայի դաստիարակության գործում եղել և մնում է միշտ արդիական:

Մ.Երմոլովայի հետազոտությունները փաստում են, որ երբ ծնողներն ակտիվ մասնակցում են ուսուցման գործընթացին երեխան ցուցաբերում է ավելի բարձր առաջադիմություն, դրական վարք, հարգալից վերաբերմունք դասընկերների, դպրոցի և ուսուցիչների հանդեպ, ունենում է հավատ սեփական անձի և հնարավորությունների նկատմամբ, ինչն էլ խթանում է նրանց ակտիվությանն ու մասնակցությանը ուսուցման գործընթացում: Փորձը ցույց է տալիս, որ ծնողների և ուսուցիչների շփման և արդյունավետ համագործակցության արդյունքում նկատվում են սովորողի կայուն և շարունակական ձեռքբերումներ, նրանց մոտ ավելի արագ են ձևավորվում և զարգանում սոցիալական հմտությունները, վարքը դրականորեն է վերափոխվում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Ինչպես նշում է հայտնի մանկավարժ Ջ.Դիլոնը <<Երեխաները դպրոցը պետք է պատկերացնեն մի վայր, որտեղ նրանց ջանքերը հանգում են հաջողությունների: Այդ հաջողությունները մեծանում են, երբ ծնողները և ուսուցիչները գտնվում են սերտ համագործակցության մեջ և պատրաստ են օգնել երեխային անհրաժեշտության դեպքում>>:

Այսպիսով ի՞նչ է իրականում նշանակում «ծնողների ներգրավվածություն»:

«Ծնողների ներգրավվածություն» տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտի ակադեմիական առաջադիմության բարելավմանը: «Ծնողների ներգրավվածություն» նշանակում է ծնողների մասնակցություն կանոնավոր, բազմակողմանի կապերում, աշակերտի ուսման գործընթացում և դպրոցի այլևայլ միջոցառումներին:

«Ծնողների ներգրավվածությունը» ծնողների համար կարող է նախատեսել.

- Դպրոցական միջոցառումներին հնարավորինս շատ մասնակցություն.

- Երեխայի կողմից լավ կատարված աշխատանքի խրախուսում և գովաբանում ծնողի կողմից.
- Դպրոցի համար ռեալ պահանջների նախանշում.
- Ուսուցիչների հետ կանոնավոր հանդիպումներ և իրենց երեխաների առաջընթացի քննարկում.
- Տնային առաջադրանք կատարելիս աշակերտին օգնության ցուցաբերում.

Տնօրենների և ուսուցիչների համար ծնողի ներգրավումը դպրոցական կյանքում նշանակում է.

- Ծնողներին իրենց երեխաների առաջընթացի մասին համապատասխան տեղեկատվությամբ ապահովում.
- Ծնողների համար տեղեկատվության հաղորդում դպրոցի միջոցառումների մասին.
- Պարբերաբար հանդիպումների կազմակերպում աշակերտների առաջընթացի քննարկման նպատակով.

Կարևոր է իմանալ, որ «ծնող» ասելով չպետք է հասկանալ միայն մայր կամ հայր: Ծնող կարող ենք անվանել այն բոլոր անձանց, ովքեր ներգրավված են երեխայի դաստիարակման գործում: Որպես օրենք, հայրն ու մայրը հոգում են երեխայի դաստիարակման ու կրթության համար, սակայն նրանցից բացի, հաճախ երեխայի դաստիարակման հարցում պատասխանատվություն են կրում տատիկը, պապիկը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, խորթ մայրը, խորթ հայրը, խնամակալը, դայակը և այլն: Այս փաստաթղթում «ծնող» տերմինը նկատի ունի բոլոր այն անձանց, որոնք պատասխանատու են երեխայի դաստիարակման ու բարօրության համար:

Ծնողների ներգրավվածության նշանակությունը

Դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն ունի աշակերտների հաջողության համար: Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին, աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում:

Հետազոտությունների համաձայն, աշակերտները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում. Ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ակադեմիական ձեռքբերում և ավելի որակով կատարած տնային առաջադրանքներ, նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է և աչքի են ընկնում դրական վարքով, բարեհամբույր են դպրոցի նկատմամբ և ունեն սեփական աձի և հնարավորությունների նկատմամբ հավատ:

Ծնողների ակտիվ ներգրավումը դրական է անդրադառնում և՛ դպրոցական հասարակության, ծնողների, և՛ աշակերտության վրա: Ստորև քննարկում ենք յուրաքանչյուր խմբի օգուտը.

Օգուտ աշակերտին

Երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, աշակերտն ավելի լավ ձեռքբերումներ է ունենում, չնայած այն բանին, թե ինչպասին է ընտանիքի սոցիալ – տնտեսական կարգավիճակը, էթնիկական ծագումը կամ ծնողների կրթության մակարդակը:

- Աշակերտը, որի ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, ավելի հաջողությամբ է ավարտում դպրոցը և ուսումը շարունակելու ավելի լավ հնարավորություններ և պայմաններ ունի.
- Վիճակագրական տվյալներով, եթե ծնողները կապված չեն ուսուցիչների հետ կամ հետաքրքրված չեն դպրոցի առօրյա կյանքով, դրանց երեխաների ակադեմիական առաջադիմությունը մյուս երեխաների համեմատությամբ ավելի ցածր է.
- Երբ ծնողները ներգրավված են դպրոցի կյանքում, աշակերտներն ավելի դրականորեն են տրամադրված դպրոցի հանդեպ և սեփական անձի ու հնարավորությունների նկատմամբ ավելի շատ վստահություն ունեն.
- Այն աշակերտները, որոնց ծնողներն ակտիվորեն են ներգրավված դպրոցի կյանքում, ավելի լավ վարք ունեն, և նրանց դեմ կիրառված կարգապահական պատժամիջոցների միջին ցուցանիշներն ավելի ցածր են մյուսների համեմատությամբ.
- Դպրոցի կյանքին մասնակից ծնողների երեխաները ավելի լավ հարաբերություններ ունեն ինչպես ուսուցիչների, այնպես էլ ընտանիքի անդամների հետ.

- Տարբեր մշակութային միջավայրից դուրս եկած աշակերտները ավելի առաջադեմ են, երբ ծնողները և ուսուցիչները միասնաբար ձգտում են ընտանիքում և դպրոցում եղած մշակութային տարբերությունների համատեղ համաձայնեցմանը.

Օգուտ ծնողին

Ծնողների ներգրավվածությունը կարևոր է ինչպես աշակերտի ուսման արդյունքների բարելավման, այնպես էլ ծնողի ունակություն-հմտությունների զարգացման համար: Փոխվում է ծնողի սոցիալական, զգացմունքային կողմը և անձնական հատկանիշները:

Երեխայի կրթության գործընթացին մասնակցելու հետևանքով ծնողը.

- Ավելի է հասկանում սեփական երեխային:
- Ավելի մեծ ուշադրություն է հատկացնում երեխայի սոցիալական, զգացմունքային և մտավոր զարգացման անհրաժեշտություններին.
- Դառնում է ավելի հոգատար, ավելի նվազ խիստ երեխայի հանդեպ և ավելի շատ է գնահատում երեխայի ձեռքբերումները.
- Դառնում է ավելի ինքնավստահ և հաճույքով կցվում է երեխայի կրթության և դաստիարակության գործընթացին.
- Ավելի շատ ուշադրություն է դարձնում սեփական գիտելիքների մակարդակին և ունակություն, հմտությունների բարձրացմանը.
- Ավելի առաջադիմորեն է օգտագործում այլևայլ հնարավորությունները սեփական ընտանիքի և երեխայի կարիքների բավարարման հմար.
- Երեխային տալիս է հնարավորություն, ավելի վստահորեն արտահայտելու սեփական տեսակետները, հիմնխնդիրները: Ավելի դրական հարաբերություններ է ստեղծում իր երեխայի ուսուցիչների հետ:
- Ավելի լիիրավ է տիրապետում երեխայի վիճակի մասին տեղեկությանը և ժամանակին միջոցներ է ձեռք առնում նրա հիմնխնդիրները լուծելու նպատակով:

Ծնողների ներգրավվածությունը բարձրացնում է ծնողի և ուսուցչի միջև կապվածության որակը, ինչը օգնում է ուսուցչին պարբերաբար ստանալ սպառիչ տեղեկություն երեխայի մասին: Աշակերտի անհատական կարիքների կարգավորումը ուսումնական գործընթացի կողմից ուսուցչին ցանկալի արդյունք կտա:

Չնայած հաղորդակցության ոլորտում գոյություն ունեցող արգելքներին, ինչպես դպրոցները, այնպես էլ ծնողները ցանկանում են, որ հարաբերություններն ավելի

հետաքրքիր դառնան, եթե դա ի օգուտ աշակերտների կլինի: Public Agenda-ի ոչ կուսակցական հետազոտական և անալիտիկ կազմակերպության կողմից 2003 թվականին անցկացրած 25-ից ավելի հասարակական կարծիքի հետազոտման վերլուծությունը ցույց տվեց, որ մանկավարժների 65 տոկոսի կարծիքով իրենց աշակերտների համար ավելի լավ կլիներ, եթե նրանց ծնողներն ավելի շատ լինեին ներգրավված, իսկ 72 տոկոսը գտնում է, որ երեխաները, որոնց ծնողները չեն մասնակցում դպրոցի ընթացիկ գործընթացներին, ընդհանրապես ծնողներից չեն ստանում այնքան ուշադրություն, որքան ցանկալի կլիներ (Johnson & Duffett, 2003):

Ուսուցիչ-ծնող արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ է հետևել ստորև ներկայացված սկզբունքներին.

1. Վստահել: Ծնողների հետ արդյունավետ շփումը և հաղորդակցումը սկսվում է վստահությունից: Վստահության կարևոր պայման է ստացված ինֆորմացիայի գաղտնի պահելը:

2. Պահպանել երկկողմանի կապ: Արդյունավետ հաղորդակցում հաստատելը թույլ է տալիս երկու կողմերին էլ հասկանալ միմյանց պահանջները և նպատակները: Երբ ուսուցիչը խոսում է ծնողների հետ պետք է հարցեր տա ոչ միայն ուսումնական բնագավառներից այլև աշակերտների հետաքրքրություններից:

3. Համագործակցել: Համագործակցող կողմերը ընդհանուր եզրեր պետք է գտնեն հաջողության հասնելու համար ընդհանուր նպատակներ սահմանելիս: Երբ առաջանում է որևէ խնդիր, դժվարություն, պետք է այն քննարկել ծնողների հետ: ՈՒսուցիչը պետք է միշտ հիշի, որ ընտանիքները տարբեր են, և բոլորի հետ գործընկերային հարաբերություններ հաստատելիս պետք է ցուցաբերել անհատական մոտեցում:

4. Կրել ընդհանուր պատասխանատվություն: Ծնողները և ուսուցիչները պետք է կիսեն պատասխանատվությունը:

5. Լավատես լիել: Ծնողների և ուսուցիչների փոխհարաբերությունները կառուցվում են լավատեսության հիմքի վրա: Ծնողների հետ հաղորդակցությունը սկսելիս անհրաժեշտ է խոսակցությունը սկսել դրական, լավատեսական նոտայով:

6. Պահպանել ջերմ հարաբերություններ: Պետք է լինել ընդունող և աջակցող:

7. Խթանել և քաջալերել: Որպեսզի ծնողը իրեն զգա արժեքավոր, անհրաժեշտ է է լսել ծնողի առաջարկները, ուսուցումն արդյունավետ կազմակերպելու իր մոտեցումները:

Կրթական գործընթացին ծնողներին ներգրավվելու և նրանց հետ արդյունավետ համագործակցելու նպատակով իրականացվող աշխատանքները տարվում են 4 հիմնական ուղղություններով՝ ճանաչողական, տեղեկատվական-վերլուծական, ակնառու-տեղեկատվական և ժամանցային։

Ճանաչողական ուղղության նպատակն է ծնողներին ծանոթացնել երեխաների տարիքային և հոգեբանական զարգացման առանձնահատկություններին և նրանց մոտ ձևավորել երեխաների դաստիարակման գործնական հմտություններ։ Ծնողների մասնակցությամբ հանգստի, ժամանցային միջոցառումների, համատեղ էքսկուրսիաների, զբոսանքների, արշավների կազմակերպումը,ինչպես նաև բաց դասերը հնարավորություն են տալիս ծնողներին դիտարկել իրենց երեխաներին, այնպիսի իրավիճակներում, որոնք տարբերվում են ընտանեկան իրավիճակներից, համեմատել իրենց երեխաների վարքն ու հմտությունները մյուս երեխաների վարքի և հմտությունների հետ, ուսուցիչներից ընդօրինակել դաստիարակության և ուսուցման մեթոդներ և հնարներ,և ի վերջո ուսուցչի հետ համատեղ ստեղծել զարգացնող միջավայր երեխաների համար։

Տեղեկատվական-վերլուծական ուղղության նպատակն է բացահայտել ծնողների հետաքրքրություններն ու պահանջմունքները, ինչպես նաև նպաստել ուսուցիչների, ծնողների և աշակերտների միջև հուզական կապի հաստատմանը։

Ակտառու-տեղեկատվական ուղղության նպատակն է տեղեկատվություն հաղորդող նյութերը ձևակերպել և մատուցել այնպես, որ գրավի ծնողների ուշադրությունը, ներկայացնել գեղագիտորեն էսթետիկ ձևավորված, մշտապես թարմացնել դրանց պարունակությունը, որպեսզի չկորի դրանց հանդեպ ծնողների հետաքրքրությունը։

Ժամանցային ուղղությունը միտված է ստեղծել ջերմ, վստահելի, հուզական հարաբերություններ ծնողների և ուսուցիչների, ծնողների և երեխաների, սովորողների և ուսուցիչների միջև։ Աշխատանքների այս ուղղությունն ամենապահանջվածը, ամենացանկալին, ամենաօգտակարն է։ Ժամանցները, տոները պետք է կազմակերպել ոչ թե առանց ծնողների, այլ ծնողների անմիջական մասնակցությամբ, որպեսզի նրանք պատկերացնեն, թե որքան ուժ, եռանդ պետք է ներդնել ցանկացած միջոցառում

կազմակերպելու համար։Արդյունավետ է նաև այդ միջոցառումներին բոլոր ծնողների համագործակցությունը, շփումը միմյանց հետ։

Մեր դպրոցում ևս կազմակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք միտված են ամրապնդելու ծնող-ուսուցիչ կապը: Նմանատիպ միջոցառումների շարքին կարող ենք դասել օրինակ այն, որ Տյառնընդառաջի տոնի կապակցությամբ, աշակերտներին արաջադրանք էր տրված կազմել խմբեր և իրենց ծնողների հետ պատրաստել Տյառնընդառաջի թեմատիկայով սեղանիկներ և ներկայացնել դրանք ընդհանուր միջոցառման շրջանակներում: Միջոցառման նպատակն էր ավելի բարելավել ծնողների միջև միջանձնային հարաբերությունները, ինչպես նաև ապրապնդել ծնող-ուսուցիչ փոխհարաբերությունները:

Այսպիսով հարկ է նշել, որ դպրոցները, որոնք հաջողության են հասել ծնողների ներգրավվածության հարցով, միայն ներգրավվածության պարզ սահմանումների շրջանակներում չեն գործում: Նրանք չեն սահմանափակվում միայն ժողովներին ներկա կամ միջոցառումներին սեփական ցանկությամբ ներգրավված ծնողների հաշվարկներով, ավելորդ քանակով. նրանք ավելորդ կողմնորոշված չեն այնպիսի պահանջներին, ինչպիսիք են ծնողի ստորագրությունը աշակերտի տնային առաջադրանքում: Նրանք հավատում են, որ աշակերտի հաջողությունը դպրոցի և ընտանիքի ընդհանուր հետաքրքրությունն է, ուսման պրոցեսում ծնողին գործընկեր են համարում, իսկ հետագայում այս գործընկերության ուժեղացման կոնկրետ ուղիներն են որոշում:

Ծնողների ներգրավվածության ոլորտում եղած հիմնախնդիրների լուծման մի քանի ճանապարհ ենք առանձնացրել:

- Հաղորդակցման բարելավում
- Ծնողների ներգրավվածության նշանակության մասին դպրոցի աշխատակազմի և ընտանիքի գիտակցության բարձրացում, և հաղորդակցման բարելավում
- Անհատականացում:

Այժմ դիտարկենք դրանք առանձին-առանձին

Հաղորդակցման բարելավում

Դպրոցի և ընտանիքի միջև երկկողմանի, կանոնավոր հաղորդակցումը երեխայի զարգացմանը նպաստող կարևոր գործոններից մեկն է: Արդյունավետ հաղորդակցման համար անհրաժեշտ է, որ ուսուցիչը և ծնողը միմյանց հետ տեղեկություններ փոխանակեն: Մեծ մասամբ տեղեկության հաղորդման համար արդյունավետ միջոցներ են մշակված, օր. տեղեկագրեր, կայք-էջեր և դպրոցի տեղեկատվական վահանակներ, որտեղ համապատասխան նյութեր/ուղերձներ են տեղադրվում: Հաճախ դպրոցներում մշակված են նմանատիպ մեխանիզմներ ծնողների ակտիվ հետադարձ կապի ապահովման նպատակով:



Որոշ դեպքերում դպրոցը ձգտում է ծնողների ներգրավվածությունը ծնողի աչքով քննարկել: Օր. կարելի է կազմակերպել ծնողական ժողովներ և սեմինարներ ոչ թե դպրոցում, այլ ինչ որ տեղ՝ հարևանությամբ, դպրոցի շատ աշակերտների բնակատեղին մոտ: Դպրոցից դուրս ժողովների անցկացումը կնպաստի ծնողների և դպրոցի միջև լարվածության վերացմանը:

Պեքտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ ծնողների հետ փոխգործակցությունը դպրոցի և յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքում հրատապ և բարդ խնդիրներից է: Ընտանիքները շատ տարբեր են, յուրաքանչյուրն ունի իր խնդիրներն ու

դժվարությունները, ուստի հնարավոր չէ պատրաստի և միակ ճիշտ պատասպխանը տալ այն հարցին, թե ինչպես շփվել ընտանիքի հետ: Շատ բան կախված է ուսուցչի հմտությունից, նա պետք է վերլուծի տարբեր հանգամանքներ, որպեսզի ճիշտ որոշում կայացնի որոշակի իրավիճակում ծնողների և սովորողի հետ շփվելու մեթոդների և միջոցների ընտրության հարցում: Ծնող- ուսուցիչ կապի պահպանումը ուսումնական գործընթացում աշակերտի հաջողության բանալին է, իսկ ծնողների և դպրոցի միջև կապի բացակայությունը, ինչպես նաև դպրոցի ու ծնողների չհամաձայնեցված գործողությունները վնասում են երեխայի կրթությանն ու դաստիարակությանը: Հարկավոր է մյուս սովորողների ծնողների մեջ ևս ստեղծել բարոյահոգեբանական կայուն ու առողջ միջավայր, որպեսզի հնարավոր լինի խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից: Կարևոր հանգամանք է նաև մանկավարժական խորհրդատվությունը ծնողին: Ուսուցիչն իր նեղ մասնագիտական գիտելիքներով ու փորձառությամբ ցանակալի է, որ կիսվի ծնողների հետ: Կարևոր պայման է փոխադարձ հարգանքն ու այն գիտակցումը, որ կողմերի արդյունավետ աշխատանքն ուղիղ համեմատական է արժեքային համակարգ ունեցող, դաստիարակված ու գիտակից անձնավորության ձևավորմանը: Ուսուցիչը պետք է փորձի ծնողներին վստահություն տալ, որ որակյալ ուսուցիչները կսովորեցնեն և կկրթեն իրենց որդուն կամ դստերը, և որ դրա համար պատրաստ են բոլոր անհրաժեշտ պայմանները: Ուսուցիչները պետք է խրախուսեն ծնողներին, նրանց տեղեկացնեն, թե ի՞նչ է կատարվում երեխայի կյանքում, խոսեն այն ընթացիկ գործընթացների մասին, որոնք կարող են ազդեցություն գործել դպրոցում երեխայի առաջընթացի վրա: Հանրակրթական հաստատությունը հստակ տեղեկություն պետք է հաղորդի ծնողներին սպասվող արդյունքների մասին, դպրոցի պլանավորած միջոցառումների, գոյություն ունեցող կարգապահական նորմերի, գնահատման գործիքների և դպրոցի նպատակների մասին:

Տնօրենը և ուսուցիչը ծնողների հետ դրական հաղորդակցման կանոնավոր գրաֆիկ պետք է կազմեն: Դպրոցը պետք է ապահովի ծնողների հետ առաջին շփման դրական լինելը և այդ ժամանակ պետք է նկատի առնվի մշակույթային տարբերությունը և յուրաքանչյուր ծնողի նկատմամբ անհատական մոտեցում ցուցաբերվի: Երբ ծնողի և դպրոցի հաղորդակցումը կանոնավոր և արդյունավետ է, աճում է ծնողների

ներգրավվածությունը, նրանց կողմից դպրոցի գնահատումը բարձրանում է և ձևավորվում է դպրոցի նկատմամբ դրական կապվածությունը:

Ամփոփում

Այսպիսով պետք է փաստենք, որ դաստիարակությունը որոշակի տեխնոլոգիաների համակարգ է, որն ուղղված է երեխայի անձի նպատակաուղղված ձևավորմանը: Հասարակական, արտադրական, մշակութային կյանքին նախապատրաստելու համար: Դաստիարակությունը իրականացվում է ընտանիքի և դպրոցի համատեղ գործունեության ընթացքում: Ուշինսկին դաստիարակությունը բնորոշում է որպես ներդաշնակորեն զարգացած անձնավորության ձևավորմանը նպատակաուղղված գիտակցական պրոցես:

Ինչպես արդեն նշել ենք, դաստիարակության գործընթացում մեծ դեր ունի ծնողի ներգրվածությունը, երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն, քննությունների և թեստերի ավելի լավ արդյունքներ: Այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Ծնողների ներգրավվածությունը բարձրացնում է ծնողի և ուսուցչի միջև կապվածության որակը, ինչը օգնում է ուսուցչին պարբերաբար ստանալ սպառիչ տեղեկություն երեխայի մասին: Աշակերտի անհատական կարիքների կարգավորումը ուսումնական գործընթացի կողմից ուսուցչին ցանկալի արդյունք կտա: Սրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում:

Ուսուցիչների և ընտանիքի փոխներգործության բնույթը պլանավորված է դպրոցի նկատմամբ ծնողների վերաբերմունքով, ինչպես նաև այն հանգամանքով, թե վերջիններս, ըստ իրենց իմացական կարողությունների, հայացքների ու դիրքորոշումների, որտեղ են իրենց տեսնում դաստիարակության գործընթացում: Դպրոցի և ծնողների համագործակցության հիմքը խմբային ու անհատական աշխատանքի ձևերն են:

Այսպիսով մանկավարժները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և դաստիարակում գիտակցական վերաբերմունք իրականության

նկատմամբ: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց կարեկցելու կարողությունը: Անձի ներդաշնակ զարգացման համար այդ երկու որակներն էլ խիստ անհրաժեշտ են:

Օգտագործված գրականության ցանկ

1. Յու. Ամիջանյան, Ա. Սահակյան «Մանկավարժություն», Երևան, 2005թ.:
2. Յու. Բաբասյան «Մանկավարժություն», II հատոր, Երևան, 1987թ.:
3. Ն. Նիկողոսյան «Ժամանակակից մանկվարժական մոտեցումներ» Երևան, 2003թ.:
4. Հ. Խ. Դավթյան «Ծնող, ուսուցիչ, հասարակություն համագործակցությունը» Երևան 1987թ.: